Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի ԹԻՎ 6-Ա ԵՎ ՀՈՒՆՎԱՐԻ 21-Ի ԹԻՎ 9-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 6-Ա որոշման 1-ին կետով հաստատվել է Աշոցք համայնքի Աշոցք բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը, որը Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն որոշման 17-րդ և 18-րդ կետերի համաձայն վերապահված է համայնքի ավագանուն: Բացի այդ, որոշման 5-րդ կետը ավելորդ է, իսկ 6-րդ կետը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասին:

Թիվ 9-Ա որոշման մեջ հղում պետք է կատարել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետին և համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու կամ օտարելու մասին Աշոցք համայնքի ավագանու համապատասխան որոշմանը:

Կատարող՝ Վ. Հովհաննիսյան
13.02.2020թ.